

կին մէջ, ըմպելու համար ի տեսիլ աշխարհի: Երջանի՛կ մարդիկ:

Թէեւ ոչ հնութեամբ, բայց ձեւով շատ ուշագրաւ է ճառից Լուծմանց հեղինակին աւանդած մէկ տեղեկութիւնն ալ: Եթէ գինարբուքն սկսած եւ յառաջ գնացած է, կ'ըսէ, եւ ուշ մնացած անձ մը ներս մտնէ, անոր առջեւ կը դնեն գինելից մեծ տաշտ մը, կամ ուրիշ ձեւով «մեծ աման» մը, զոր թուրք բառով կե՛զգայտի կը կոչէին (Լծ. Պհ. Գ): Եւ «որպէս պատիժ» ուշանալուն՝ կը պահանջէին որ «կամ խմես, կամ ի բաց գնա» (Լծ. Հես): Եւ նա ստիպուած էր այնչափ ըմպել՝ «որ հաւասարի նոցա խմելովն» (Լծ. Պհ. Գ): Ահա թէ ո՛ւր հասած էր մեր նախնեաց արբշուութիւնը:

Գ. Իսկ մեր եկեղեցականը՝ որ ներկայ են այդպիսի խնճոյից, ի՞նչպէս կը վարուէին արդեօք: Գիտենք՝ որ պատուէր կար իրենց՝ գինարբութեան սկիզբը թողուլ մեկնիլ (աստ, 141): Եթէ երկիւղած անձինք կը յարգէին այս կանոնը՝ թելադրութեամբ նոյն իսկ իրենց խղճին, բայց պատուէրդ ինքնին ապացոյց է՝ թէ բոլոր կարգաւորք չէին յօժարիր այդ համեղագոյն մասէն զրկուիլ: Եւ Շնորհալին հարկաւ արդեանց վրայ հաստատուած՝ կ'ը-